ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԼԵՀԱՍՏԱՆԻ ՍԵՅՄԻ ՍԵՆԱՏՈՐ ԼՈՒԿԱՇ ԱԲԳԱՐՈՎԻՉԻՆ

Մայիսի 13-ին Ն. Ս.Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Լեհաստանի Սեյմի լեհ-հայկական պատգամավորական բարեկամական խմբի անդամներին Լեհաստանի Սեյմի սենատոր Լուկաշ Աբգարովիչի գլխավորությամբ:

Ողջունելով սենատոր Աբգարովիչի գլխավորած պատվիրակության այցը Հայոց հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Նորին Սրբությունը եւս մեկ անգամ իր ցավակցությունը հայտնեց ավիավթարի հետեւանքով Լեհաստանի նախագահ Լեհ Կաչինսկու, նրա տիկնոջ եւ Լեհաստանի մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների եւ եկեղեցականների մահվան կապակցությամբ՝ վստահություն հայտնելով, որ լեհ ժողովուրդը կհաղթահարի այդ ցավը Աստծուն ապավինելով:

«Մենք ճանաչում ենք լեհ ժողովրդին որպես բարեպաշտ ազատվածասեր եւ աղոթարար ժողովուրդ, եւ ուրախությամբ պիտի նշենք, որ ջերմ են մեր հարաբերությունները ինչպես Լեհաստանի պետական իշխանությանց, նույնպես եւ եկեղեցականաց հետ: Մեր երկու ժողովուրդների միջեւ կապերն ունեն դարերի պատմություն, ինչի ապացույցը Լեհաստանի հայ համայքնի գոյությունն է, եւ երախտագետ ենք, որ Ձեր երկրի իշխանություններն ամեն ջանք գործադրում են Լեհաստանում ապրող մեր զավակաց ազգային կյանքում դյուրություններ ապահովելու համար:

Այսօր Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին տոնախմբում է Փրկչի Համբարձման տոնը, որ նաեւ Հայոց Հայրապետական Աթոռի Ս. Էջմիածին վերադարձի տոնն է, եւ Մեզ համար այս նվիրական տոնին Մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ եւ Ձեր ժողովրդին՝ հայցելով Բարձրյալից, որ իր Ամենազոր Աջի ներքո պահի ու պահպանի մեր երկու երկրները, ժողովուրդներին ու եկեղեցիները»,- նշեց Վեհափառ Հայրապետն իր խոսքում:

Իր երախտագիտությունը հայտնելով ընդունելության, ջերմ խոսքերի ու աղոթքների համար՝ սենատոր Աբգարովիչը նշեց, որ Լեհաստանում բարձր են գնահատում այն ջանքերն ու եռանդը, որ Լեհաստանի հայությունը ներդրել եւ ներդնում է երկրի բարգավաճման եւ լեհ մշակույթի զարգացման համար:

«Ցավոք մեր այցի ժամանակը քիչ է, եւ չենք կարող Ձեզ հետ միասին ուրախակից լինել Ձեր տոնին, սակայն անպայման ժամանակ կգտնենք աղոթելու եւ մեր մոմը վառելու Ս. Էջմիածնի նվիրական տաճարում»,- նշեց հայկական արմատներ ունեցող սենատոր Լուկաշ Աբգարովիչը: Լեհական պատվիրակությանն ուղեկցում էին՝ ՀՀ-ում Լեհաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ժդիսլավ Ռաձինսկին եւ Լեհաստանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Աշոտ Գալոյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ